ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ելնելով իր ցամաքային եւ ջրային տարածքի վերեւում գտնվող օդային տարածքի նկատմամբ յուրաքանչյուր մասնակից պետության լիակատար եւ բացառիկ ինքնիշխանությունից,

նկատի ունենալով օդային տարածքի օգտագործման օդային երթեւեկության կառավարման եւ հսկողության նկատմամբ հարցերի կարեւորությունը,

ցանկանալով նպաստել պայմանավորվող կողմերի միջեւ համագործակցության հետագա զարգացմանը եւ ամրապնդմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Մասնակից պետությունները պարտավորվում են նախքան համապատասխան պետական կառույցների ստեղծումը եւ օդային տարածքի օգտագործման համար նորմատիվ ակտերի ընդունումը, ղեկավարվել օդային տարածքի օգտագործման եւ դրա նկատմամբ հսկողության համար գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերի պահանջներով, որոնք չեն հակասում մասնակից պետությունների օրենսդրություններին:

ՀՈԴՎԱԾ 2

Մասնակից պետությունների տարածքներում օդային երթեւեկության եւ հակաօդային պաշտպանության կառավարման միասնական համակարգի մարմինները հանդիսանում են օդային տարածքի օգտագործման կառավարման եւ դրա նկատմամբ հսկողության հարցերով հիմնական մարմիններ:

Օդային երթեւեկության պլանները համաձայնեցվում են այն մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների (կոմիտեներ) հետ, որոնց տարածքում նախատեսվում է օդային տարածքի օգտագործումը:

Օդային տարածքի օգտագործման կարգի խախտումների մասին օդային երթեւեկության եւ հակաօդային պաշտպանության կառավարման միասնական համակարգի մարմինները տեղեկացնում են այն մասնակից պետությունների պաշտպանության նախարարություններին (կոմիտեներին), որոնց տարածքում տեղի է ունեցել խախտումը:

ՀՈԴՎԱԾ 3

Օդային տարածքի օգտագործման եւ դրա նկատմամբ հսկողության կարգի համաձայնեցման գործողությունների համադրումը հանձնարարել օդային երթեւեկության կառավարման միասնական համակարգի գոյություն ունեցող գլխավոր կենտրոնին եւ հակաօդային պաշտպանության զորքերի կենտրոնական հրամանատարական կետին:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակից պետությունները համադրված գործունեություն կիրականացնեն օդային երթեւեկության, նավագնացության, վայրէջքի եւ կապի կառավարման տեխնիկական միջոցների ու համակարգի հետազոտությունների, նախագծման, պատրաստման, ձեռքբերման եւ ներդրման աշխատանքների ժամանակ, այդ թվում օդային տարածքի օգտագործման կատարելագործման բնագավառում համատեղ ծրագրերի ստեղծմամբ՝ հաշվի առնելով Համագործակցության զինված ուժերի եւ օդային տարածքից այլ օգտվողների շահերը:

ՀՈԴՎԱԾ 5

Մասնակից պետությունները պարտավորվում են պայմանագրային հիմունքներով օդային տարածքի օգտագործման եւ օդային երթեւեկության կառավարման բնագավառում մտցնել մասնագետների նպատակային պատրաստում եւ վերապատրաստում՝ համաձայնեցված մեթոդներով եւ ծրագրերով:

Նրանց կողմից տրվող վկայականները եւ վկայագրերը, ինչպես նաեւ այլ փաստաթղթերը, որոնք հավաստում են մասնագետների մասնագիտությունը եւ որակավորումը, այդ թվում նաեւ մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը տրված վերոհիշյալ փաստաթղթերը, ճանաչվում են Համագործակցության պետությունների տարածքներում:

ՀՈԴՎԱԾ 6

Մասնակից պետությունները անցումային ժամանակաշրջանում, մինչեւ 1994 թվականը, մշակում են օդային տարածքի օգտագործման վերաբերյալ օրենսդրական ակտեր:

Մասնակից պետությունները անհրաժեշտություն են համարում օդային տարածքի օգտագործման եւ ավիացիայի գործունեության կարգը կանոնակարգող օրենսդրական ակտերի մշակման ժամանակ հաշվի առնել Համագործակցության զինված ուժերի եւ օդային տարածքից այլ օգտվողների շահերը:

ՀՈԴՎԱԾ 7

Մասնակից պետությունները Համագործակցության զինված ուժերի գործունեության համար կներկայացնեն իրենց վրա գտնվող օդային տարածքը եւ չեն ձեռնարկի դրանց նորմալ գործունեությունը խախտող կամ դժվարացնող որեւէ գործողություններ:

Մասնակից պետությունների եւ Համագործակցության միացյալ զինված ուժերի ռազմական օդանավերը թռիչքներ են իրականացնում Համագործակցության բոլոր պետությունների օդային տարածքներում՝ մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների (կոմիտեների) համատեղ սահմանած հատուկ կանոններին համապատասխան: Նման կանոնները չպետք է հակասեն այդ պետությունների տարածքներում օդանավերի թռիչքների համար գործող կանոններին:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: